32. ՔԻՐԻՋ ԹԱՔԱՎՈՐԻ ԽԵՁԱ̈ԹԸ

Ժուկով-ժամանակով մե քաղաքում թաքավորում էր Քիրիջ անունով թաքավորը: Քիրիջ թաքավորը հինքը ծեր էր, հըմա մե չատ խորոտ, հուրի-փերի ջա̈հել կնիկ ուներ: Օրերից մե օր էս թաքավորի պալատին մոտցավ մե օտարական ձիավոր, կայնավ պալատի հա̈ռեչը ու ջուր ուզեց: Թաքավորի նաժիշտները ջուր բերին, չըվերցրեց:

Իշխանները բերին, էլի չըվերցրեց: Մեծ վազիրը բերեց, էլի չըվերցրեց:

Թաքավորն ասավ.— Ա՛յ օտարական, թե ծարավ ես, ջուրը խմա՛, թե ծարավ չես, հընչե՞ս էսքան մառթի չառչրում: Մեծ վազրի բերած ջո՞ւրն էլ չես խմում, ասա՛, տենամ՝ ի՞նչ մարթ ես: Էլ ջուր բերող չունենք, մնում ենք ես ու թաքուհին:

Օտարականն ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, ես մե հասարակ մարթ եմ, հըմա մինակ թաքուհու ձեռի ջուրը կըխմեմ:

Թաքավորը թաքուհուն ասավ.— Թաքուհի՛, օտարական մարթ ա, բան չըկա, տար մե թաս ջո՛ւր տու, թո խմա:

Թաքուհին ջուրը լցեց, հիչավ ցաձր, ջուրը տարավ տվեց օտարական ձիավորին: Օտարականը ջուրը առավ, խմավ, «օխա՜յ» ասավ, թասը ետ տալու ժամանակ թասը քցեց, թաքուհու թևից բռնեց, դրեց ղուջաղն ու ձինը քշեց:

Ղալմաղալն հընգավ պալատը:

—Տարա՜վ, թաքուհուն տարա՜վ:

Մե քանի ձիավոր պադրաստվան, որ հետևից էթան, թաքավորը նոր հիմացավ, որ էտի Սիրտա̈կ դևն էր, զինվորներին ասավ.— Մի՛ գացեք, դուք Սիրտա̈կ դևի ձեռից կնիկ բերող չեք:

Թաքավորն էնքան գլուխը տփեց, որ ըչկերը քոռցան, հընգավ պալատն ու մնաց:

Քիրիջ թաքավորը իրեք տղա ուներ: Տղերքը գնացեր են որսի: Հիրկուն որսից էկան, խորը տեսան, հիրանք էլ գլխները տփին, լա̈ցան: Սուս կացան:

Միյուս օրը ջոչ տղեն էկավ խոր մոտը, ասավ.—Ա՛յ խեր, էլ ի՞նչ տղա ենք, որ մեր մերը մնա ջերության մեչ, մենք ըստե նստենք: Իրավո՛ւնք տու, էթանք մեր մորը ման գանք: Ախպերներս համաձայն են:

Խերն ասավ.—Գնա ախպերներիտ կանչա՛:

Կանչեց:

—Տղե՛րք ջան,—ասավ խերը,—դուք ուզում եք էթաք ձեր մորը քթնե՞ք:

Իրեքով էլ ասին՝ խա՛, ուզում ենք:

Թաքավորն ասավ.—Տղե՛րք ջան, էտ տարողը Սիրտակ դևն ա, դևի խետ գլոխ դնել չի հըլնի, կէթաք, իզուր տեղը կըկորչեք, տունս կըքանդվի:

Տղերքը, թե՝ չէ՛, որ չէ՛, բդի էթանք:

Էն ժամանակ թաքավորը ջոչ տղին իրավունք տվեց, որ էթա, մե տարի ման գա, մե տարի ետո կըգա, նոր մեկէլ տղերքը կէթան: Ջոչ տղեն գնաց մե տարի ման էկավ, դռռը-դառտակ ետ էկավ:

Էս տղեն մնաց տունը, միչնեկ տղեն գնաց: Էս էլ դառտակ ետ էկավ:

Էն վախտը պստի տղեն ասավ.—Հայրի՛կ, հիմի ես կէթամ, չանքի չըքթնեմ, չեմ գա:

Խերն ասավ.—Տղա՛ ջան, ես հավատացած եմ, որ դու կըբերես: Գնա մեթարի մոտ, ասա՛, թո իմ ձինը դուս բերա: Էս քսան տարի ա չեմ խեձե, չամիչ եմ տվե, պախեր եմ, հիմի լավ քոքցեր ա:

Իմ թուրը կախուկ ա պատից, գնա թուրս էլ վերցո՛ւ:

Կէթաս արևելք, էնքան կէթաս, չընքի խասնես մե բիձա մարթի: Բիձին հըմմեն բանը դուզը կասես, կասես, որ Քիրիջ թաքավորի տղեն ես, մորտ տարեր ա Սիրտակ դևը, էթում ես բերելու: Բիձեն ինչ կասա, էնենց կանես:

Տղեն, ստանալով խոր օխնանքը, ճամբա յա հընգնում:

Գնա՛ց, գնա՛ց, խասավ Բափելին, ուզեց պատմա հիրա գալու նպատակը, բիձեն ասավ.—Գիտեմ, Մինա՛ս, գիտեմ, գնում ես մորտ փնտրելու:

Մինասը մնաց զարմացած:

—Դու ո՞րտեղից հիմացար իմ գալու նպատակը, իմ անունը,—խառցրեց Մինասը:

—Ես 365 տարեկան եմ,—ասավ Բափելը,—աչխարքը չիչ մարթ ա մնացե, որ իմ մոտը չի էկե: Սիրտակ դևը քո մորն էլ էս յանով տարավ:

—Բափե՛լ,—ասավ Մինասը,—ճամբեն նչա՞նց տու, էթամ:

Բափելն ասավ.—Գնա՛, որդի՛ս: Օխնում եմ քո ճամբեն: Կէթաս օխտ օր, ճամբի վրեն պարկած ա մե աղվես: Աղվեսը քնուկ ա: Քառասուն օր ա քնում: Աղվեսի պոչից կըբռնես, կըվերցնես օխտ անքամ կըտփես ջետին: Թե աղվեսը զարթնավ, հա̈ռեչ չես էթա, չըզարթնավ՝ կէթաս: Կէթաս կըխասնես մե քաղաք: Էտ քաղաքում մարթիք էլ քառասուն օր քնում են: Հիմի ընդոնց քնելու ժամանակն ա: Բոլորը քնուկ են, մինա̈կ մե ա̈րա̈ը ա զա̈րթուն: Էս ա̈րա̈բը պահակ ա: Գլխի վիրևը մե զանգ ա կախե: Որ քունը տանում ա, դանթում ա, գլոխը կպնում ա զանգին, զա̈րթնում ա: Էտ մարթի մոտով զգույշ կըհընցնես: Որ չեզի ա̈րա̈բը տեսավ, էլ սաղ ետ չես գա, էս ա̈րա̈բը սաղ քաղաքը ոտի կըխանա: Ա̈րա̈բից էն յանը կայնուկ են մե ջել, մե ղոչ: Էտ ջելն ու ղոչը պալատն են պախում: Ղոչի հա̈ռեչը դրուկ ա մե ջա̈նդա̈կ, ջելի հա̈ռեչը դրուկ ա մե խուրց խոտ: Խոտը, որ դնես ղոչի հա̈ռեչը, ջա̈նդա̈կը՝ ջելի հա̈ռեչը, ըտոնք չեզի ճամբա կըտան, կէթաս կըմտնես պալատը: Որ մտնես պալատը, քառասուն օթաղ ա, դռներն հիրար մեչ են բացվում: Քառասուն դռներով էլ ներս կըմտնես: Բացած դռները կըծասկես, ծասկած դռները կըբացես: Վեռչի օթաղի մեչ պարկած ա մե չատ սիրուն ախճիկ: Էտ ախճիկը քնուկ ա: Ախճկա գլխի տակը մե գիրք կա դրուկ, ստոլի վրեն էլ մե սիրտա̈կ կտոր: Գիրքն էլ կըվերցնես, կտորն էլ, կըգաս: Կտորն իմ պատանքն ա, գրքի մեչ էլ գրուկ ա, թե իմալ քո մորը բդի ազատես: Գիրքը կըկարթամ, էն վախտը կասեմ, էլ հիմի չեմ կանա բան ասի:

Տղեն Բափելին «մնաս բարով» ասավ ու գնաց:

Գնաց խասավ աղվեսին, պոչից բռնեց, օխտ անքամ էնենց տվեց ջետին, որ չիչ մներ, աղվեսի սիրտն ու թոքը բերնից դուս գեր: Աղվեսը չըզարթնավ:

Մինասը գնաց հառաչ, խասավ ա̈րա̈բին, տեսավ ա̈րա̈բը դանթում ա, մոտով հընցավ, գնաց խասավ ջելին ու ղոչին: Բարև տվեց, ըտոնք բարևներն առան, խոտը տվեց ղոչին, միսը՝ ջելին:

Խառցուց.—Հընչի՞ են ձեզի անոթի պախում, հընչի՞ խոտը դրեր են, ջե՛լ, քո հա̈ռեչը, ղոչ միսն էլ դրեր են քո հա̈ռեչը:

Ջելն ասավ.—Մեզի անոթի են պախում, որ չըքնենք: Քառասուն օրից ետո կըզարթնեն, մեզի ուտելիք կըտան: Շնորհակալ ենք, Մինա՛ս, գնա՛, չեզի չենք խանգարի:

Մինասը մտավ պալատը, բաց դռները ծասկեց, ծասկուկ դռները բացեց, խասավ ախճկա օթաղը: Գիրքը գլխի տակից վերցուց, կտորը ստոլի վրայից վերցուց, դրեց թևի տակը, ուզեց էթա, մեկ էլ մտածեց. «Ես ջահել տղա եմ, էսի ջահել ախճիկ, գամ գողութուն անեմ, էթամ ախճկա հերեսն է՞լ չըպաչեմ, էլ ի՞նչ ջահել եմ:

Ախճկա հերեսը կըպաչեմ, կըբռնեն, ջայնամ կըբռնեն, թո սպանեն», մթկի մեչն ասավ ու կզվավ ախճկան պաչեց:

Որ ախճկան պաչեց, ախճիկը զարթնավ, ալալորումը քցեց.—Դռնե՛ր, գողին բռնե՛ք:

Բաց դռներն ասին.—Էսքան վախտը բաց ինք, ճխանի վրա կայնելով մեռանք, չենք բռնի, էս տղեն մեզի ծասկեց:

Ծասկուկ դռներն ասին.—Էսքան վախտ ծասկուկ մեռանք, չենք բռնի, էս տղեն մեզ բացեց:

—Ղո՛չ, բռնա՛:

Ղոչն ասավ.—Էս քառասուն օր ա՝ անոթի մեռնում ի, էս տղեն խոտ տվեց, չեմ բռնի:

—Ջե՛լ, բռնա՛:

Ջելն ասավ.—Էս քառասուն օր ա անոթի խատնում ի, էս տղեն միս տվեց, կուշտ ճերա, չեմ բռնի:

Տղեն ձինը քշեց փախավ, էկավ Բափելի մոտ:

Բափելը չատ ուրխցավ:

Վերցուց գիրքը կարթաց, տղին ասավ.—Էս ճամբով կերթաս, կըխասնես մե սիրտնակ ամարաթի: Էտ ամարաթը Սիրտնակ դևի ամարաթն ա: Դևը հիմի քնուկ ա: Կէթաս մորտ մոտը: Մերտ ոնց կասա, էնենց կանես:

Մինասը ձինը քշեց, օխտ օրվա ճամբեն մե օր գնաց, խասավ Սիրտնակ դևի ամարաթին:

Մերն ակուշկից տեսավ, էկավ փաթթվավ տղի վիզը, ասավ.—Մինա՛ս, ջան, փախի՛, գլո՛խտ ազատա, դևը, որ զարթնավ, ջոչ կտորտ անգամ կըթողա:

Մինասն ասավ.—Ա՛յ մեր, էկեր եմ չեզի տանելու, որ մեռնեմ էլ, չեմ էթա: Իմալ անենք դևին սպանենք, որ էթանք, խերս էնքան ա գլոխը տփե, ուչկերը քոռցեր ա, ես դառտակ իմա՞լ էթամ իմ խոր հաուեչը կայնեմ:

Մերն ասավ.—Մինա՛ս ջան, որ էտենց ա, արի էթանք դևի օթաղը: Օթաղի մեչ կա մե կըրե կարաս: Թուրը զաներ ա կըրե կարասի մեչը, թե կանաս թուրը խանես, էտ թրով կըսպանես դևին: Դևին հուրիչ թուր չի սպանա:

Տղեն գնաց, թուրը կըրե կարասից քաչեց, ճխտեց դևի սիրտը, սիրտն ու թոքը հիրար խառնեց, թուրը խանեց:

Դևն ասավ.—Մինա՛ս, մե՛կ էլ զանրկ:

Մինասն ասավ.—Ես իմ թևի հունարը ջիղում եմ, էտ էլ բոլ ա:

Դևը սատկավ: Մինասը վերցուց մորը, էկավ Բափելի մոտ, որ չնորակալութուն ասա:

Մինասը, որ էկավ, Բափելը չատ նեղացավ, ասավ.—Ես չեզի չասեցի, որ գիրքն ու կտորը կըբերես, դու ի՞նչ իրավունքով ես ախճկա հերեսը պաչե:

Մինասն ամոթու կարմրավ:

Բափելը շարունակեց.—Էտ ախճիկն էկավ մոտս: Քո հաուեչը էրկու պայման ա դնում: Յա բդի դու էն ախճկան առնես, յա թե չէ, խետը կովես: Թողում ա քո կամքին: Ախճկա էն հերեսը, որ պաչեր ես, սևացեր ա, չատ ջղայնացեր ա:

Տղեն ասավ.—Բափե՛լ, եթե էն ախճիկն ընձի ուզում ա, ես ընդ-րա ջերին կըդառնամ, ընդրա վրեն ձեռ չեմ բանցրցու:

Տղեն, որ էսենց ասավ, ախճիկը էրևաց տղի աչկին: Տղի մերը չատ ուրխցավ, որ էտ տեսակ խառս հռաստ էկավ: Էխճկա հերեսի սևութունն էլ հընցավ, քանի որ հիրա մարթի պաչուկն էր, հո հու-րիչի պաչուկ չէր, որ մներ սև:

Բափելը չնախավորեց տղին, մորը աչկի լուս տվեց, ու հինքը մեռավ: Մինասը Բափելին թաղեց, բերած կտորը արավ պատանք, վրեն մե ջոչ քար գլորեց դրեց, մորն ու կնգան վերցուց հընգավ ճամբա:

Բափելի մոտից գիրքը բերեր էր: Էկավ տուն: Խերն ու ախպեր-ները չատ ուրխցան: Խառսը տեսավ, որ կեսրարը համ ծեր ա, համ քոռ ա, կիսուրը ջահել ա, հիրաար հարմար չեն:

Ասավ.—Մինա՛ս, հո՞ւր ա իմ գիրքը:

Մինասն ասավ.—Գիրքը հըլա իմ խուրջինի մեչն ա:

Ախճիկն ասավ.—Գնա գիրքը բե՛ր:

Մինասը գիրքը բերեց, ախճիկը բացեց, կարթաց: Էս գրքի 359 հերեսի վրա գրուկ էր քոռը սաղացնելու դեղը: Բերին դեղը սար-քին, քսին թաքավորի ըչկերին: Թաքավորի ըչկերը բացվան:

Կարթացին 360 հերեսը: Գրուկ էր ջահելանալու դեղը: Էտ դեղն էլ պադրաստին, տվին թաքավորին, թաքավորը ճերավ, ութանա-սուն տարեկան էր, դառցավ քառասուն տարեկան:

Բերին օխտ օր քեֆ արին թաքավորի խըմար, օխտ օր էլ տղին խառնիս արավ: Ճերան, խման, ձեր բարին հիչացին: Ընդոնք խա-սան հիրանց մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին: